ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱԾ

Ադ ալ Ի՛անդի. այսպէս գրած էր կ'ըսեն Սողոմոնի մասանուոյն վրայ։ Աշխարհիս վրայ չկայ ուրախութիւն մը որ առանով սրտէն չպաղի, չկայ տրտմութիւն մ'ալ՝ որ առանով չթեթևնայ սրտէն. երկուքին համար ալ ստոյգ է Սողոմոնի մասանին, Այդ ալ կ'անցնի. թէ որ ամէն մարդ ալ աս մասանիս ունենար, որչափ շատ կ'ըլլար բարեխառն մարդկանց թիւն։

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ինչո՞ւ լուսաւորութենէ մութ տեղ մտնելու որ ըլլանք՝ մէկէն ի մէկ բան չենք տեսներ.

— Վասն զի աչքին բիբը յատկութիւն մը ունի որ լուսաւորութեան մէջ կը պզտիկնայ, որպէս զի չափէն աւելի լուսոյ Ճառագայթներ վրան զարնելով տեսութեան գործարանը չխայթեն. ուստի երբոր լուսաւորութենէ մութ տեղ մը կը մտնենք, որովհետև հոն տեղի մարմնոց վրայէն եկած լուսոյ Ճառագայթները տկար են, բիբը կրնայ զանոնք ընդունիլ, որով կը սկսի անզգալի կերպով ընդարձակիլ, բայց ինչուան բաւական չափն առնէ ատեն կ'անցնի. և ան տեղն առարկաներն ալ քիչ մը ատեն անցնելէն ետև որոշ կը տեսնուին։

ԳԻՏԵԼԻՔ ՏՕՄԱՐԱԿԱՆ

Ուամգոն ամենէն ծանօթ և գործածած գրքոյկն է Տօմարն կամ Օրացոյցն. բայց մէջն որչափ անծանօթ բաներ կան իրեն. անոնցմէ ոմանք համառօտիւ բացատրելը կարծենք որ հաճոյ և հարկաւոր ըլլայ անոնց։ Այս անգամ գրքին անուան պատճառը տանք. Տօմար բառը նման ձայնով կը գտուի մեր մէջ ալ, Պարսից լեզուին ալ, Յունաց և Լատինաց մէջ ալ, ասոնց մէջ կը նշանակէ գիրք կամ հատոր գրոց. մեր մէջ աւելի սեփական եղեր է ժամանակագրական և թուական գրուածոց այս անունս տալ, իսկ հիմայ մասնաւորապէս Օրացոյցին կուտանք։ Օրացոյցն ալ կ'ըսուի մէկ մը օրերուն տոները ցուցընելուն համար, և այն պատճառաւ Տօնացոյց ալ կ'ըսուի մէկ մասը. մէկ մ'ալ օրերուն, եղանակաց կամ օդոց փոփոխութիւնը ցուցընելուն համար, և որովհետև օդոց փոփոխութիւնները՝ լուսնի փոփոխութիւնէն կ'առնուի, անոր համար Լուսնացոյց ալ կ'ըսուի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

"Կը պատմեն արևելեայք թէ Հայոց Հեթում թագաւորը օր մը Իկոնիոյ սուլթանին երկրէն իր պատուիրակին հետ ծպտեալ անցնելու ատեն, սուլթանին պաշտօնեաներէն մէկը կը Ճանչնայ զինքը։ Ան ատեն պատուիրակը Հեթումին ապտակ մը կը զարնէ, կարծեցընելու համար թէ Հեթում իր ծառայն է, և ոչ թէ Հայու թագաւորը"։

Հերոլոս Մոգենագրան արևելեան։

Ա՛ս բարեյարմար ապտակը կ'ազատէ Ռուբինեանց ամենէն սիրելի և երախտաւոր թագաւորը։

ԱՐՁԱՆԱԳԻՐ

Կոստանդնուպօլսոց մօտ Անատոլուի ափանց վրայ դեռ կ'երևնան Տրովադայ իշխատակները, Հոմերոսի երգած դիւցազանց գերեզմանները. այն դաշտերուն մէջ ասկէ 3000 տարի առաջ եկաւ Հայոց նահապետը Զարմայր 10,000 Հայ քաջերով և Յունաց դիւցազանց հետ կռուելով անոնց հետ ալ թաղուեցաւ։ Հոմերոս երգեց իր Յոյները, Աղեքսանդր գնաց լալու Աքիլլեայ գերեզմանին վրայ, Եւրոպացի Ճամբորդք ինչուան հիմայ կ'երթան զանոնք փնտռելու. 3000 տարիէն վերջը 300,000 Հայ զարմանալի և տխուր բաղդով մը մոտեցեր կը բնակին իրենց դիւցազանց ոսկորներուն քով. և ով է՛ անոնցմէ որ Զարմայրայ գերեզմանը փնտռէ և արցունք մը նուիրէ, այն անուան արձագանգ մը հանել տայ հոն, գոնէ այս արձանագրովս.

Բիւր Հայկազնեան յերասխայ խաղից սլացեալք ասա՝ ի Տրովս
Ընդ Էասաց ու Աքիլլեանց շահատակեալ կամք անկեալք
Զուգաշիրիմք Ոլիմպեայ քաջահանգէս դիւցազանց,
Հա՜պա հոգի հայրենի յերգս համբաւուց Զարմայրայ։

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Մ՚ԻՑՆ Մեծն Ներսէս մեր հայրապետն Հայաստանի մէջ 1000 վանքէն աւելի շիներ է. հիմայ քանի՞ վանք կայ Հայաստան, քանի՞ն շէն և բնակուած։

ՁԱՒԵՇՏ

Ագու�գնաց առ բժիշկն և իւր ձագոյն դեղ ուզեց. և նա ասէ. Գնա՛ հանց տերև բեր որ՝ ի վերայ ագռաւոյ ծիրտ չկենայ։ Գնաց և ոչ գտաւ։

Ցուցանէ բանս զայնոսիկ որ զամենայն մարդ խաբեն և նենգեն. և յորժամ՝ ի պէտ լինի բան ինչ՝ ուր և երթան ոչ գտանեն օգնութիւն, զի ոչ են թողեալ տեղի բարեկամութեան։

ՀԱՆԵԼՈՒԿ

Հիմէն չունի տունն երևի,
Ինքն վերան 1 միասիւնի.
Տանիան 2 է կոկ զերդ զապիկի
Առիքն 3 ի քաղերթ 4 նմանի։

ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԻՐ ԱՅՐԱՐԱՏ

1 Զաթը։ 2 Թասան։ 3 Տամ։ 4 Իլիմպե։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ